

խրաբաններ գերեզմանի առաջ, ամեն մարդու, ամեն քրիստոնէի գլխի վերեւ, և ձայն տալիս. Արի որ ննջեալ և կանգնեաց ի մեռելոց, և լուսաւորեցէ, զքեզ Բրիստոս. արի... Բրիստոս յարեաւ—եւ և զու, թոթափիր վրայիցդ մահուան քունը և ոտքի կանգնիր. կոյր ազխութեան խաւար գերեզման և անսանձ կրքերի դժոխային մի անդունդ է քո կուրծքը, որտեղ աստուածային ճշմարտութեան լոյս և երկնային արդարութեան հուր ձգելու համար գերեզման և դժոխք իջաւ քո Փրկիչը. բաց աչքդ, Գողգոթայի վերայ ծագած անձնադիր սիրոյ արեգական ծաղաղայիներ խայծը չնս գոյում, չնս լսում, և քո մեղաւոր հոգին չէ ցնծում՝ այդ աղու ձայնը լսելով. Մարիամ—եւ քո Փրկիչը քեզ կանչում է. եւ և հետեւիր Նորան, բարձրացիր Նորա հետ... Բրիստոս յարեաւ...:

Կ. Վ.



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

«Տէր լոյս իմ ևս կեանք իմ, ևս յունկ երկեայց. Տէր ապաւեկ կեանք իմոյ, ևս յունկ դոյսցայց».

Սաղ. ԻՁ 1.

ՈՒՐ ևս երգեցող մարգարէի անուշիկ քնար, ուր ևս Բրիստոնէութեան յաղթանակի ԺԹ. դարն է, զիտութեանց գարունն է այժմ. քրիստոնէական բարոյականի ու մարդկային իմաստութեան անուանը ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան տօն է կատարուում, բայց զու լուռ ևս, հրաշալի քնար. քո ձայնիդ ալիքը չի հնչում լիւրանց բարձունքում, զու չես անցնում ու արձագանք տալիս պանծացող սերնդի դատարկ կրծքում. «Տէր լոյս իմ և կեանք իմ ևս յունկ երկեայց. Տէր ապաւեկ կեանք իմոյ, ևս յունկ դոյսցայց»:

Բրիստոնէայ հայ եղբայրներ, հերոսական մի ձայն է այս, աներկիւղ համարձակութեան մի արձագանգ, որ սկիզբ է առ-

նում մի անրնկճելի սրտից, սահում, անցնում է նիւթապաշտութեան մութ մութ ձորերից, վեր ելնում դէպի կապուտակ կամարն ու իւր ետեից դէպի վեր քաշում մարդիկ ու ազգեր: Այդ ձայնի նշանաբանը ըստրոյական արիութիւնն է, քնարի այդ ոսկեղէն լարը ըստրոյական աներկիւղութիւնն է:

Բարոյական արիութիւնը սովորական արիութիւն չէ. աներկիւղ ու համարձակ է վայրի զազանը, ինքնապաշտպանութեան ըզզացմունքը ետում է նորա մէջ. թշնամու ձայնը խեղդում է նորա ձայնով, թշնամու հարուածները իւր հետ մէկ տեղ շատ անգամ նորա ոտից կոխան են դառնում: Դա արիութիւն է, բայց դա չէ բարոյական արիութիւնը:

Աներկիւղ ու համարձակ է բարբարոսը, քրիստոնէութեան ու ճշմարիտ զիտութեան լոյսից զուրկ վայրի մարդը. նորա հրոսակներն առջեից մահ, ետեից աւեր ու սարսափ են տարածում: Դա արիութիւն է, բայց դա չէ բարոյական արիութիւնը:

Աներկիւղ ու համարձակ է նաւապար, տեսէք, որտաւում է երկինք, արեւը ծովի ետեն է անցել, հեղեղ կարկուտ ու կրակ է սփռում երկինք խաւար ծովի վերայ. զղրուում է ծով, նորա կրծքում անդունդներ են բացուում, մահահոտ ալիքները դէզ դէզ գրոհ են տալիս, բաղխում են իրար. ծովը լայն բացուած գերեզման է, դարձել: Սակայն նորա վերայ չըջում է նաւը: Վերից երկնքի հարուած, վարից ալիքների բաղխում, անձնատուր, անձնատուր, են աղաղակում. բայց նոքա փշրուում են նաւի հպարտ կրծքի և կողերի վերայ: Նորա խելում կանգնած է մի յանգուգն մարդ, աներկիւղ ու համարձակ վարում է նաւը, պատուում է ալիք, արհամարհում խաւար անդունդներ և յառաջ լողում: Լուսաւոր մարդու միտքը չըջում է ծովերի վերայ, Դա էլ արիութիւնն է, բայց դա էլ չէ բարոյական արիութիւնը:

Արիութեան այս տեսակը ինքնապաշտպանութեան զգացմունքից է բղխում. բայց մի՞թէ մարդու գերազոյն կոչումը, գերազոյն նպատակը միայն իւր անձի մէջն է. մի՞թէ նիւթապաշտութեան արժանի հանքերումն է

Թագնուած մարդու կենաց գաղտնիքը Նթէ այոյ հապա ինչու կամայ ակամայ մեր ոտքերը ծունկ են իջնում: մեր բազուկները տարածուում այն սրտոյ, այն նահատակաց, այն հերոսների յիշատակի առջև: որոնց հարստութիւնը դառն աղքատութիւնն էր: որոնց փառքը իրենց փշեայ պսակն էր: որոնց սուրը աշխարհի անարդարութիւնը շանթող լեզուն էր: որոնց մերկութեան ծածկոյթը իրենց մարմնի կարմիր արիւնն էր: որոնց հանգիստը գնդապետն էր:

Մի անպղտոր հայեացք ձգեցէք քրիստոնէական հաւատոյ դաշտի վերայ ու ճշմարիտ հերոսները տեսէք: Տեսէք մի չնաշխարհիկ Սուրբ Ստեփաննոս: մի մատաղ սարկաւազ: նորա վերայ հակառակորդները կարկուտի պէս քարեր են թափում: քարկոծում: նա նոյն անխառն ու հողով հանգիստ Ստեփաննոսն է: աչքերը դէպի երկինք դարձած: Նորա կենաց գաղտնիքը իւր մարմնից դուրս է:

Տեսէք մի հսկայ Պօղոս: երկնային գաղափարների զիրքը կրծքին սեղմած կանգնած է հեթանոս աշխարհի հրապարակում: Նիւթապաշտ հեթանոսութեան հարուած մնաց, որ չթափուէր այդ հսկայի վերայ: սակայն հարուածող հեթանոսութիւնն ընկաւ: հսկայ Պօղոսը կանգուն մնաց:

Տեսէք Հայոց աշխարհի փառաց ու մեծութեան անսասան վկայ Լուսաւորչին՝ Հայոց աշխարհի կրծքումը կանգնած Մեծ Գրիգորին: որի առաջ ամբողջ հայութիւն ծունկ է իջնում ու համբուրում ս. նշխարներ. Հայոց 1600 տարեկան Ս. Տաճարը Լուսաւորչի աղքատութեան, չարչարանաց, տառապանքների յանդիման վկան է: նշխարներն, նշխարներն անգամ փրկարար: սուրբ: հրաշագործ ու կենդանող են:

Արդ: այս օրերը: նահատակների գունդը և մեր երկրպագութիւնը վկայ են: թէ մարդու զերազոյն նպատակը իւր անձի մէջը չէ: նորան հասնելու ուղիղ ճանապարհը բարոյական արիւթիւնն է: մի արիւթիւն: որ մարդու բարոյական պարտականութիւնիցն է բղխում: մի սրբիչ մաքրիչ հուր: որ մեր օրերում դժբաղդարար նիւթապաշտութեան

անձրեւին է բռնուել: Ո՞վ կ'ուրանայ քաղաքակրթութեան կարիքը: բայց և ո՞վ կհամարձակուի քաղաքակրթութեան ստեղծած վախկոտ քնքշութիւնը: հիւանդոտ անարիւթիւնը պաշտպանել: Նախ սուրբ զիրքը թող խօսի:

Եհովայի հրամանով արին Մովսէս Սինա սարն է բարձրացել: որոտացող Աստուծուց պատգամներ առնելու: նիւթապաշտութեամբ զեղուն իարայէլը մահու սպառնալիքով պահանջում է Ահարոնից ոսկի հորթ ձուլել և այն աստուած դաւանել: Գաղափարը երկիւղով ծածկող անարիւթ Ահարոնի ձեռքերը հորթ են ձուլում մոլար ամբոխի համար: Ահա իջնում է սարից Մովսէս: բարկացայտ աչքերը սեւեռում կուռքի և ամբոխի վերայ: նախատում երկոտ առաջնորդին: փշրում է կուռքը: և ոչնչացնում արձանացած մոլորութիւնը:

Մի վայրկեան թօթափենք մեր արտեանունքներից արծաթի փռին: բարձրանանք իւրաքանչիւրս մեր Մինա սարը: կապուտակ երկնքի խորհրդաւորութեան մէջը թաղուինք ու մի հայեացք ձգենք լերան ստորոտում աշխարհի վերայ: Տեսէք հրապարակի վերայ կանգնած մի ոսկի հորթ. Աստուծոյ անունը դարձեալ կայ: պաշտամունքը դարձեալ կայ: բայց այդ անունը: այդ պաշտամունքը ոսկի հորթին է տրուում: Մովսէսն հեռու է: իսկ Ահարոն մահացող վախեցող Ահարոն Մովսիսի բարոյական արիւթիւնը չունի: յանդիմանելու արծաթամոլութիւնն ու մոլորութիւն: և յօժարում է հորթ ձուլել: որ իւր կեանքն ազատէ: Եւ որքան անթիւ են մեր օրերում գաղափարն անձի երկիւղով ուրացող Ահարոններ:

Մտէք ձեզ պատահող առաջին աղքատիկ հիւղը: մերկութեան քաղցի: անձրեւող վշտերի թագաւորութեան սահմանն էք մտել: Ելէք: անցէք բարեգործ մեծատունների բնակարաններն ու վաշխառուի տունը մտէք: քաղաքակրթութեան բարեաց հեղեղը ողողել է այս տուն: շարք շարք սնդուկների մէջ դեղին մետաղն է խօսում: այդ ձայնը վաշխառուի հոգին է: նորա ամէն մի ոսկու մէջ կողոպտուած աղքատի մի կունց արցունքը

կայ, որ ի մի հաւաքուելով արտասուաց զեռ կղաւնայ: Բայց ինչպէս համարձակուինք աղքատի համար մեծատան սիրտը ջաւեցնել: Է՞ որ նա մեզ պէտք կգայ մի օր: Ո՛չ, հազար ոչ, մենք այդ չենք կարող անել, մեզ պակասում է բարոյական արիութիւն:

Ո՛րքան և քիչ, բայց դարձեալ շատ են այն կարիճները, որոնք ըմբռնում են մարդկային բարձր կոչումը: Բայց ի՞նչպէս քարոզեն գեղեցիկն ու վայելուչը, ի՞նչպէս գէժ դնան նիւթապաշտութեան զետի հոսանքին: Է՞ որ աշխարհը կծաղրէ նոցա, Է՞ որ ծանակ կղաւնան: Բարոյակրթութեան հիւանդոտ վախը խեղդել է արիութեան ոգին: Բայց միթէ աշխարհը միշտ չի՞ ծաղրել սրբութիւն, անաղարտ անուն, աննկուն հերոսութիւն, վախկոտ գաղափարականներ, և միթէ անհաւատների ծաղրից կորե՞լ է հաւատը, չքացել առաքինութիւն, մեռել է արդարութիւն:

Ա՛րդ, կարո՞ղ է նիւթապաշտութեան վախից դողդողացող հոգին գաղափարական գուարժութիւն զգար, հոգեոյ յարատե կրջանկութիւն վայելել: Կարո՞ղ է մահուանից աւելի զօրեղ Աստուծով պարծենալ — «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց...»:

Բարոյական վախկոտութեան ծառը եսականութիւնն է, որի վերայ նիւթապաշտութիւն է ծաղկում. եսականութեան ծառն արմատախիլ անող փրկարար հոգմը ճշմարիտ մարդասիրութիւնն է, որի հովը պարտաճանաչութեան անոյշ բուրմունքն ունի. իւր բարոյական պարտքը հասկացող մարդը վախ չունի, վասն զի իւր կենաց գաղտնիքը իւր անձից դուրս է:

Բարոյական արին այն մարդն է, որ գիտէ տանջուել ու կռուել, որ ընդունակ է չարութեանը պատերազմ՝ հրատարակել իւր անձովը պաշտպանել կրկրպագութեան առարկան. նա այն մարդն է, որ գիտէ ողեւորուել երկնաւոր զինուոր վարդապետի խօսքերով. «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր».
«Հօ՛ւր եկի արկանել յերկիր»:

Բարոյական արին այն մարդն է, որ պարտականութեան զգացմունքի հրապոյրով յանիրաւի տանջուող ընկերին օգնելու սիրով

կռուի դաշտն է ելնում ու մոռանում է իւր անձի դժբաղդութիւնը. գաղափարի առաջ նսեմանում է անձնական երջանկութեան զգացմունքը:

Եւ վերջապէս բարոյական արին է նա, ով պատրաստ է իւր անձը տալ իրրեւ փրկանք չարութեան ձեռքը գերի ընկած առաքինութեան: հաւատալով՝ որ չի մեռնում հաւատալով թէ Վր կորուսցէ զանձն իւր, գացէ զնա ։

Բարոյական արիութեան համար նիւթական կապ չկայ. անարդարութեան երեսին ապակի հանողն է նա, իւր հացի, իւր բարիքի մինչ իսկ իւր կեանքի գնով: Սորա ոյժը, բարոյականութեան աղբիւրն Աստուած է, նորա փառքը պարտաճանաչութեան սէրն է. խաւար հոգիների մէջ նորա լոյսը Տէրն է, խաւար լճնամիների մէջ ապաւէնն Աստուած: Սորա յաղթական երգը, աներկիւղ համարձակութեան սաղմոսը, հերոսական ոգու շարժիչ մեքենան, միսիթարիչ մրմունջը արիասիրտ մարգարէի հոգեբուլղի աղօթքն է. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ՞ երկեայց. Տէր ապաւէն կենաց իմոց, ես յումմէ՞ դուացայց»*:

Բենիկ վարդապետ



ԾԱՂԿԱՔԱՂ ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

(ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔԻՑ)

Եթէ գերեզմանատունը մօտ է քո ընտելութեան տեղին, շուտ շուտ գնա՛ այնտեղ, որ յիշես թաղուածներին և խոնարհութիւն սովորես՝ մանաւանդ կրքերդ շարժած ժամանակ: Եւ երբ լսում ես, որ մէկը հոգու վրայ է, շուտ գնա՛ նրա մօտ և տես ինչպէս է հոգին աւանդում մարդը:

— Պահենք խոնարհ մտքով և վախճենք ամբարտաւանութիւնից, որ է ամեն շարեաց մայրը: Անբաղնունք Աստծու խօսքով և սրբերն պատմութեամբ:

* խօսուած է Նոր-Նախիչեւանի Ս. Կոստանոյ եկեղեցում 1897 թ.: